

Վեներաբիլի Գրոսար Ֆրանչեսքո Սիմպե-  
նիի արձանագրությունը Վեներաբիլ Բնակող  
Ջուդայեցի վաճառականներու վաւերա-  
ցումով Մարգարայի ազնուական ծագումի  
մասին: (ASV, Atti Notarile, 12070,  
Protocolli, Francesco Simbeni, folios 194 r.)



Հասանաբար Մարգարայի հօր անգարդ  
տապանաքարը Նոր Ջուդայի գերեզմա-  
նատան մէջ



Մարգարայի եղբոր Յովհաննէս կամ  
Օհաննիս դի Մարգարայի տապանաքարը  
Չինսուրայի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ  
եկեղեցոյ գաւիթէն ներս

### ՆՈՐ ԶՈՒՂԱՆ ԻՐԱՆԻ ՆԱԴԻՐ ՇԱՀԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Քրիստիտե Կոստիկեան

Ժէ դարի սկզբում շահ Աբբաս Ա-ի կողմից Իրան բռնագաղթեցուած Հայու-  
թեան մի ճիւղն աշխարհին յայտնի դար-  
ձաւ Սպահանի արուարձանում Հաստա-  
տուած Նոր Ջուղայի Հայկական Համայն-  
քի ձեռներէց վաճառականների գործու-  
նէութեան շնորհիւ: Ժէ դարը Նոր Ջուղա-  
յի պատմութեան ամենածաղկուն շրջանն  
էր, որին յաջորդեց աստիճանաբար անկու-  
մը՝ կապուած Իրանում զարգացող քաղա-  
քական իրադարձութիւնների, ինչպէս  
նաեւ՝ արտաքին որոշ գործօնների հետ:

Ժէ դարի վերջից Իրանի Սեֆեան պե-  
տութիւնն աստիճանաբար թուլանում է ու  
ի վերջոյ 1722 թ. կործանուած աֆղանների  
ապստամբութեան հետեւանքով: Նոր Ջու-  
ղայի աստիճանաբար թուլացման սկիզբը  
եւս ուսումնասիրողները կապում են Սե-  
ֆեան շահ Սուլթան Յուսէյնի իշխանու-  
թեան շրջանի (1694-1722 թթ.) հետ, երբ  
ուժեղանում են պաշտօնեաների կամայ-  
կանութիւնները, դրամաշորթութիւնը եւ  
մահաբեղականացած Հայերի ոտնձգութիւն-  
ներն իրենց քրիստոնեայ մեծահարուստ  
ազգականների ունեցուածքի նկատմամբ<sup>1</sup>,  
մի հանգամանք, որը խրախուսուած էր դե-  
ռես շահ Աբբաս Ա-ի կողմից շրջանառու-  
թեան մէջ դրուած, այսպէս կոչուած, իմամ  
Ջաֆարի օրէնքով<sup>2</sup>: Սակայն Նոր Ջուղայի

Հայութեան իսկական փորձութիւնները  
սկսուած են Միր Մահմուդի գլխաւորած  
աֆղանների կողմից 1722 թ. Սպահանի  
պաշարման շրջանից<sup>3</sup>: Ականատեսի վկա-  
յութեամբ՝ այնտեղի Հայ մեծահարուստնե-  
րից պատանդներ են վերցուած եւ ահռելի  
գումարներ դանձուած. այս ամենն ուղեկց-  
ուած է այլեւայլ դաժանութիւններով ու  
սպանութիւններով<sup>4</sup>:

Նոր Ջուղայի Հայութեան դրութիւնն  
էլ աւելի է վատանում Նադիր շահի իշխա-  
նութեան շրջանում<sup>5</sup>. արդէն ԺԸ դարի 40-  
ականներին տեղի բնակչութեան եւ մեծա-  
հարուստ ընտանիքների զգալի մասը հե-  
ռացել էր Իրանից<sup>6</sup>: Հեռանալու պատճառ-  
ները բազմաթիւ էին. դրանց մէջ կարելի է

րանի ասիմիլատորական քաղաքականութեան  
հարցի շուրջը.- «Բանքեր Մատենադարանի», Ե-  
րեւան, 1956, թիւ 3, էջ 87-88, Մ. Կարապետեան,  
Իմամ Ջաֆարի օրէնքը և արեւելահայերը,  
«Պատմա-քանասիրական հանդէս», 1988, թիւ 1,  
էջ 219-221:

3 Այս մասին հանգամանալից տե՛ս Յ. Տեր-Յով-  
հաննէս, Պատմութիւն Նոր Ջուղայոյ որ յԱս-  
պահան, հտ. Ա, Նոր Ջուղա, 1880, էջ 227-229,  
240:

4 Մանրամասն տե՛ս Ա. Մաղալեան, Նադիր շահի  
դարաշրջանի պատմագրական յուշարձանները,  
Երեւան, 2010, էջ 48-49, 53-55:

5 Թէեւ Նադիրի պաշտօնական թագադրութիւնը  
տեղի է ունեցել 1736 թ. մարտի 9-ին, այնուամե-  
նայնի, նա արդէն 1732 թուականից՝ շահ Թաֆ-  
մասպ Բ-ին գահընկէց անելուց յետոյ, Իրանի  
փաստացի տիրակալն էր: Նադիր շահը սպա-  
նուել է 1747 թ. յունիսին նրա դէմ կազմակեր-  
պուած դաւադրութեան արդիւնքում (Ernest  
Tucker, Nader Shah, Encyclopedia Iranica, online  
edition <http://www.iranicaonline.org/articles/nader-shah>):

6 Ծ. Խաչիկեան, Նոր Ջուղայի հայ վաճառակա-  
նութիւնը եւ նրա տնտեսաւարտական կապե-  
րը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում,  
Երեւան, 1988, էջ 51:

1 S. Aslanian, *From the Indian Ocean to the Medi-  
terranean*, Berkeley, New York, London, p. 204.  
2 Այս հրամանագրի հրապարակման մասին տե-  
ղեկութիւններ կան Կարմելեան տարեգրութեան  
մէջ (այդ մասին տե՛ս V. S. Ghougassian, *The  
Emergence of the Armenian Diocese of New Julfa in  
the Seventeenth Century*, Columbia University,  
1995, p. 102, յղում՝ *Chronicle of the Carmelites*,  
vol. I, p. 288): Այս օրէնքի ու դրա կիրառութեան  
մասին տե՛ս նաեւ Յ. Փափազեան, *Սեֆեան Ի-*

նշել թէ՛ Հարկային բեռի ծանրացումը, թէ՛ երկրի ընդհանուր տնտեսութեան եւ թէ՛ արտաքին առեւտրի անկումը:

Չնայած Նադիր շահի կողմից նախկին Սեֆեան պետութեան տարածքների վերանուստումը, նրա իշխանութեան շրջանում Իրանի ներքին դրուժիւնը ծայրայեղ ծանր էր: Աֆղան եւ թուրք նուաճողների տիրապետութիւնն ու պատերազմները երկրի տնտեսութիւնն աղետալի վիճակի էին հասցրել: Չափազանց ծանր դրութեան մէջ էր յայտնուել գիւղատնտեսութիւնը: Մեծապէս տուժել էին նաեւ քաղաքները. Սպահանը, Շիրազը, Ղազուինը, Եզդը եւ Թաւրիզը կորցրել էին իրենց բնակչութեան երկու երրորդը: Ականատեսների վկայութեամբ Սպահանի շատ թաղամասեր լքուած ու անբնակ էին, իսկ Հարկահաւաքութիւնն ուղեկցուած էր անասելի դաժանութիւններով, ինչը պատճառ էր դառնում, որ այնտեղ մնացած բնակիչներից շատերը եւս փախուստի դիմէին<sup>7</sup>:

Նադիր շահի օրօք խիստ ծանրանում է Հարկային բեռը, որից ստացուող գումարներն ուղղուած էին մշտապէս պատերազմող նրա բանակի ծախսերը փակելուն<sup>8</sup>: 1742 թ. նոր թափով վերսկսուած է բնակչութեան ընդհանուր աշխարհագիրը եւ Հարկման ենթակայ տնտեսութիւնների հաշուառումն ամբողջ երկրում: Աղբիւրները հաւաստում են, որ Հարկերի գանձումը կատարուած էր բազմապատկուած չափերով եւ չվճարողներին դաժան տանջանքների ենթարկելով<sup>9</sup>: 1741-1743 թթ. Դաղստանեան անյաջող արշաւանքից յետոյ, որի ընթացքում իրանական բանակը ծանր կորուստներ էր ունեցել, Նադիր շահ

հը հրամանագրեր է յղում երկրի տարբեր կողմերը՝ նախորդ տարիների չգանձուած Հարկերը եւ պակասորդը գանձելու հրամանով, նաեւ նշանակում է նոր տուրքեր ու տուգանքներ<sup>10</sup>:

Ժամանակակիցները վկայում են Նադիր շահի օրօք իշխող վերնախաւի, այդ թւում նաեւ Հոգեւորականութեան ունեցուածքի բռնագրաւման բազում դէպքերի մասին<sup>11</sup>: Այդ միջոցով հարստացուած էր պետական գանձարանը, եւ ընդարձակուած էր պետական հողային սեփականութիւնը: Ժամանակակից աղբիւրները հաւաստում են<sup>12</sup> նաեւ պետական գանձարանը լցնելու նպատակով Նոր Ջուղայի Հայ վաճառականներից մի քանիսի նկատմամբ բռնութիւնների կիրառման մասին: Ունեւոր Հայերից դրամ կորցելու նպատակով գործի էին դրւում զրպարտութիւններ<sup>13</sup>:

Ուսումնասիրողների կարծիքով՝ ջուղահայերի կեանքի ու հարստութեան անպահով եւ անպաշտպան դրութիւնն առաւել մեծ անհանգստութիւն էր պատճառում Նոր Ջուղայի Հայ վաճառականներին<sup>14</sup>:

Որոշ տեղեկութիւնների համաձայն՝ Նոր Ջուղայի Հայ վաճառականների վրայ ծանր տարեկան «ոչ պակաս քան 10000 թումանի<sup>15</sup>» Հարկ, իսկ 1745 թ. յաւելեալ 60500 նադիր<sup>16</sup> տուգանք է դրւում եւ

10 M. P. Арунова, К. З. Ашрафян, *Государство Надир Шаха*, М. 1958, сс. 98-99.  
11 M. P. Арунова, К. З. Ашрафян, *ibid.*, էջ 68-69.  
12 Այդ մասին տե՛ս Ա. Մաղալեան, *ibid.*, էջ 88, նաեւ՝ S. Aslanian, *ibid.*, էջ 206-208:  
13 Յ. Տէր-Յովհաննէանց, *ibid.*, էջ 267-269:  
14 S. Aslanian, *ibid.*, էջ 205:  
15 Թուման - تومان - դրամական խոշոր միաւոր, որ հասարակ էր 10.000 դիմարի (Յ. Փափագեան, *ibid.*, էջ 219):  
16 Նադիր շահի օրօք Իրանում շրջանառուող արծաթեայ դրամ, որը կշռում էր 11,5 գրամ, համարժէք էր 10 շահիի կամ 500 դիմարի եւ յայտնի էր նաեւ ռուսի աճուամբ (տե՛ս <http://www.azaraha.org/?muid=48&item=656>):

7 رضا شهباني، تاريخ ايران عصر افشاريه، جلد 2، ص. 660.  
8 Ann K. S. Lambton, *Landlord and Peasant in Persia*, London-New York-Toronto, 1953, p. 132.  
9 И. П. Петрушевский, *Очерки из истории феодальных отношений Азербайджана и Армении в 16-ом начале 19 в.в.*, Ленинград, 1949, с. 85.

գանձուած անողոք մեթոդներով<sup>17</sup>: Խաչատուր Ջուղայեցու հաւաստմամբ՝ 1745 թ. Նադիր շահի Հարկահանների՝ ջուղայեցիներից պահանջած գումարը կազմում էր 45000 թուման, եւ «բազումք յազգէս Հայոց ետուն զամենայն ստացուածս իւրեանց, եւ ինքեանք մերկք եւ կողոպուտք անկան փախստականք ի տար աշխարհ. եւ յայնմհետէ սկսաւ իսկ խաթարեալ աղարտիլ զբազմամարդ եւ զգեղեցկաշէն աւանս մեր Նոր Ջուղա»<sup>18</sup>:

Չանազան պատրուակներով տուգանքներ ու գումարի պահանջներ էին ներկայացուում նաեւ երկրի այլ շրջանների բնակիչներին: Դա յատկապէս սաստկանում է Օսմանեան կայսրութեան դէմ պատերազմի տարիներին՝ 1743-1746 թթ.<sup>19</sup>: Այս քաղաքականութիւնը յանգեցնում է իրանի տնտեսութեան անկմանը, բնակչութեան հիմնական մասի աղքատացմանը, մանր գիւղացիական տնտեսութեան քայքայմանը եւ մերթընդմերթ տարբեր շրջաններում ծագող խռովութիւնների<sup>20</sup>: Այդ խռովութիւնների ալիքը էի շրջանցում նաեւ Սպահանը եւ մասնաւորապէս՝ Նոր Ջուղան: Սպահան ժամանած ռուս ազնուականի տեղեկութեան համաձայն՝ 1747 թ. մարտի սկզբին քաղաքում էին շահի Հարկահաւաքները, որոնք Սպահանի բնակիչներից ու Նոր Ջուղայի վաճառականներից մեծ գումար էին պահանջում: Քաղաքի կառավարիչն ու իշխանաւորները ժողով են անում եւ որոշում, որ այլեւս գումար չեն կարող հաւաքել, քանի որ

չունեն. այդ մասին գրելու էին շահին: Այնուհետեւ սպահանցիները սկսում են պատրաստուել քաղաքի պաշտպանութեանը: Շուտով սակայն շահի ուղարկած զորքը արեան մէջ խեղդում է խռովութեան փորձը<sup>21</sup>:

Նոր Ջուղայի այս շրջանի շահական հրամանագրերն առատ տեղեկութիւններ են բովանդակում նրա պատմութեան զանազան իրողութիւնների եւ հանգամանքների մասին՝ օգնելով աւելի յստակ ու խորը պատկերացնել դրանց փոխկապակցուածութիւնը եւ պատճառահետեւանքային կապերը: Այս վաւերագրերում յառնում են տուեալ շրջանում ջուղայեցիների առջեւ կանգնած խնդիրները եւ դրանց լուծման համար ձեռնարկուած քայլերը:

Պէտք է նկատի ունենալ նաեւ, որ չնայած շահական հրամանագրերով որոշ հարցերում Նոր Ջուղայի Հայութեան համար նպաստաւոր որոշումներ կայացնելուն, տեղի Հայութեան դրութիւնն աստիճանաբար աւելի էր ծանրանում: Այս առումով խիստ բնութագրական են Տէր-Յովհաննէանցի հետեւեալ խօսքերը. «Մինչ ամենայն կեղեքիչ անիրաւութիւնք հասանէին ՚ի վերա Ջուղայեցւոց դիմէին առ Նադէր... եւ նա ոչ անտես զխնդիր նոցա առնելով՝ Հրամայէր տալ նոցա զհրովարտակ զի մի՛ ոք նեղեսցէ զնոսա, այլ մինչ նոքա ՚ի Ջուղա վերադառնային, դարձեալ Հարկապահանջք կամ տուգանառուք զհետ նոցա հասանէին»<sup>22</sup>:

Սոյն յօդուածի շրջանակներում կը փորձենք գիտական լայն շրջաններին ներկայացնել Նոր Ջուղայի դիտարկուող ժամանակաշրջանի պարսկերէն հրովարտականները, որոնց բնագրերը պահուած են Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում: Սա-

21 M. P. Арунова, К. З. Ашрафян, *ibid.*, էջ 185:  
22 Յ. Տէր-Յովհաննէանց, *ibid.*, էջ 268:

17 Յ. Տէր-Յովհաննէանց, *ibid.*, էջ 250:  
18 Խաչատուր Ջուղայեցի, *Պատմութիւն Պարսից*, Վաղարշապատ, 1905, էջ 269-70:  
19 M. P. Арунова, К. З. Ашрафян, *ibid.*, էջ 100:  
20 Այս մասին մանրամասն տե՛ս M. P. Арунова, К. З. Ашрафян, *ibid.*, էջ 147-225:

կայն դրանք բոլորը չեն<sup>23</sup>։ Ընդգրկուած են միայն այն վաւերագրերը, որոնց պատճենները մեր ուսումնասիրութեանն են տրամադրել Նոր Զուղայի պատմութեանը նուիրուած արժէքաւոր Հետազոտութիւններէ հեղինակներ Ս. Ասլանեանը եւ Վ. Ղուկասեանը։ Յօդուածում ընդգրկուած վաւերագրերի հերթական համարները նշում ենք նրանց վրայ առկայ թուի հիման վրայ։

**Վաւերագիր 1**

Համար 103(228), պատճեն, գիր՝ շիբասթ

Նաղիր շահի հիշրայի 1147 թ. մուհարրամ ամսի (1734 թ. յունիսի 3 — յուլիսի 3) հրովարտակը՝ տրուած Նոր Զուղայի հոգեւոր առաջնորդի խնդրագրի հիման վրայ, որով կարգադրուած է նախկին հարկային հաշուումները համապատասխան վարուել ու խնդրարկուին նեղութիւն չպատճառել։

Անուններից լուսագոյն՝ Ալլահի անունով

Բարձրեալին եմ ապաւինում։ Արքայական հրաման եղաւ հետեւեալի մասին.

Որովհետեւ խնդրարկուները [ստորել] շարադրուած խնդրագրով դիմեցին, ուստի ինչպէս, որ մուսայիզները<sup>24</sup> վանքի հողերն ու այգիները տեսել ու ջամ'<sup>25</sup> են արել, այն-

23 Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում պահուող ԺԸ դարի պարսկերէն հրովարտակների ցանկը տե՛ս Լ. Մինասեան, *Դիւան Ս. Ամենափրկիչ վանքի 1606-1960*, Նոր Զուղա, 1983, էջ 116-118:

24 Մումայիզ - ميميز - Այսպէս էին կոչուում այն պաշտօնեաները, որոնք ստուգման նպատակով չափում էին ցանքատարածութիւնները, այգիները, քանջարաններն ու այլ ստացուածքները, նշում, թէ ինչքան եկամուտ կարող է ստացուել դրանցից եւ ըստ այնմ որոշում, թէ որքան հարկ պէտք է գանձուի (Յ. Փափագեան, *Մատենադարանի պարսկերէն հրովարտակները*, պրակ Ա, էջ 115):

25 Ջամ' - جمع, կամ արուար-է ջամ' - جمع ابواب - էր կոչուում հարկերի հաշուումն այն ձեւը, երբ որեւէ հարկատու օրինակից կամ առանձին գիւղական համայնքից գանձուող բոլոր պետական հարկերը մանրամասնութեամբ հաշուում էին եւ

պէս էլ հայերի համայնքը պէտք է դիւանի մալիյեաթը<sup>26</sup> վճարի։ Խնդրարկուներին չպէտք է նեղութիւն պատճառեն, այլ պէտք է թողլ տան, որ իրենց գործերով զբաղուեն։

Գրուեց 1147 թուականի սրբազան մուհարրամ ամսին։

Ամենամուսուտ ծառաներ Հին ու Նոր Զուղաների<sup>27</sup> հոգեւոր առաջնորդների ու քահանաների խնդրագիրը

Գերագոյն համաստեղութիւններին հասնող պալատում բնակուող Դարեհի ողջամտութիւնն ունեցող եւ Ալեքսանդրի փառքին արժանի, երկնային բարեբախտ տիրակալի ծառաների բարձրութեանն են հասցնում, որ քանի որ սրանից առաջ Միրզա Ֆարսի Ալլահին յանձնարարուել էր Զուղայի հողային տարածքի [չափագրումը], նրա կողմից նուաստներին շուրջ 70 ջարիթ<sup>28</sup> եկեղեցական ցանքատարածութիւնները եւ վակ-

առանձին-առանձին հարկային մատենաներում գրանցուելուց յետոյ, ի մի բերուելով, դրամական արտայայտութեամբ արձանագրուում, թէ որքան հարկ պէտք է վճարուի եւ դրանից որքանը որ հարկի հաշուից (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 103):

26 Մալիե - ماليه - կամ յոգնակի մալիյեաթ - ماليات - ԺԾ դարից եւ աւելի վաղ ժամանակներից գոյութիւն ունեցող գլխաւոր եկամտահարկի՝ մալի տարբերակներից է, որն աւելի գործածական դարձաւ ԺԸ դարում եւ փոխարինում էր մալի՛ն կամ մալոջհաթին (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Բ, էջ 222):

27 Տէր-Յովհաննէանցի մեկնաբանութեամբ Նոր Զուղայի համայնքը բաժանուում էր Հին եւ Նոր Զուղաների. հիմնուղայեցիները Արաքսի ափին գտնուող Զուղայից եկածներին էին, իսկ միւսները եկել էին Հայաստանի այլ վայրերից եւ հաստատուել Զուղային կից թաղերում շահ Արքաս Բ-ի օրօք (Յ. Տէր-Յովհաննէանց, նշ. աշխ., հտ. Բ, էջ 268):

28 Ջարիթ - جريث (արաբերէնից փոխառութիւն)՝ չափման միաւոր, որով չափում էին ցանքատարածութիւնը՝ ելնելով ցանուող հացահատիկի կշռից։ Հողատարածքի չափման այս միաւորը հաւասար է 144 գազի եւ 4 դաֆիզի, կամ 1000 գարի։ Տարբեր վայրերում այն տարբեր էր՝ Սպահանում համարժէք լինելով շուրջ 1000 մ<sup>2</sup> (دهخدا، لغت نامه، جلد 9، ص. 379)

Ֆայիհ<sup>29</sup> այգիների 70 ջարիթը եւս չափագրուել-մտցուել են տարածքի հարկացուցանի մէջ՝ ջամ' նշանակելով։ Սրբազնագոյնի օրհնեալ հիմքին յայտնի է, որ վանքերը աղօթատեղիներ են, իսկ այգիները՝ վակֆեր ու թշուառներին ապրուստի միջոցները։ Նուաստներին վիճակը աշխարհիկ անձանց յայտնի է՝ [մինչ այժմ] ոչ մի դիւար<sup>30</sup> որպէս մալ ու մանալ<sup>31</sup> չենք վճարել։ Նախկինում Զուղայի հայերն այսպէս էին վարում։ Այժմ նրանք եւս մոլորուած են, որովհետեւ ոչինչ չեն ստանում։ Խեղճերին ապրուստի միջոցները սահմանափակուում են այդ երկու-երեք կտոր այգիների եկամտներով։ Խնդրում ենք ի սէր Ալլահի ու ճշմարիտ ուղու սուրբ իմամների, գերագոյն, սրբազնագոյն, օրհնեալ ողորմածութեամբ վանքերի այգիների ու նրանց վակֆային հողատարածքների խաբաշը<sup>32</sup> կրճատել եւ հանել Զուղայի հողերի

29 վակֆ - وقف - հասցի նշանակում է «կանգ առնել», «մարմնալ»։ Այսպէս էին կոչուում եկեղեցիներից կամ մզկիթներից նուիրուած, վակֆ արուած հողերն ու այլ ստացուածքները, որովհետեւ, նուիրուելով որեւէ կրօնական հաստատութեան, դրանք այլեւս ենթակայ չէին օտարման եւ մնում էին եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականութիւնը, որպէս այդպիսիք ազատում էին պետական հարկերից (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 120):

30 Դիւարը (նոր պարսկ. dīnār, միջին պարսկ. dēnār < լատ. denarius aureus) հնագոյն ոսկի դրամի անուանումն է։ Denarius բառը գործածուում էր դեռ Հռոմի հանրապետութեան շրջանից դրամի իմաստով։ Իրանում այն սկսում է հատուել Սասանեան Արտաշիր Ա-ի օրօք եւ կշռում էր 7-7,4 գրամ (Philippe Gignoux, Michael Bates, *Dinar*, Encyclopaedia Iranica, Vol. VII, Fasc. 4, pp. 412-416 <http://www.iranicaonline.org/articles/dinar>): ԺԷ դարից դիւարը խիստ արժեքովում է՝ վերածուելով արծաթեայ դրամի։ Խոշոր դրամական հաշուումները կատարում էին թումանով, որը հաւասար էր 10.000 դիւարի։

31 Մանալ - منال - Սկզբնաղբիւրներում եւ վաւերագրերում երբեմն մալ եւ ջահաթ (մալոջա հաթ) հարկային տերմինի փոխարէն հանդիպում է մալ եւ մանալ (մալոմանալ) եզրոյթը, որից կարելի է ենթադրել, որ մանալը փոխարինում էր ջահաթ կամ մութալաջջեհաթ եզրոյթներին (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Բ, էջ 223):

32 Խաբաշը - خراباش - Արաբական տիրապետութեան շրջանում այսպէս էր կոչուում գլխաւոր հողա-

ջամից, որպէսզի թշուառներն լուսաբացից մայրամուտ հանգիստ աղօթեմք յաւերժական պետութեան յարատեւման համար, որն ամէն պահ Ալլահն անտես չի առնի։ Նորին [Մեծութեան] բարձրագոյն հրամանով։

بسم الله خير الاسماء

اعوذبالله تعالى فرمان همايون شد آنکه چون صاحبريضه بشرح متن عرض نموده اند از قراریکه ممیزین بازید اراضی و باغات کلیسیا را نموده جمع شده اند از انقرار مالیات دیوان را جماعت ارامنه مهمسازى بصاحبريضه مزاحمت نرسانند گذارند بشغل خود اشتغال نمایند. تحریراً فی شهر محرم الحرام سنه ۱۱۴۷.

موضع مهر مبارک نواب کامیاب همايون اعلى

عرضه داشت کمترین بندگان خلیفه ها و کشیشها جولاه

قدیم و جدید

بموقف عرض بندگان نواب کامیاب سپهر رکاب سکندر شأن دارا دریان ثریا مکان والا میرسانند که چون قبل ازین میرزا فتح الله بمساحت اراضی جولاهه مأمور و از انجهه موازی هفتاد جریب اراضی کلیسیاهای فقیران و هفتاد جریب باغات وقفی کلیسیاها را منظور داشته داخل نسخه مساحت نموده جمع قرار دادند که بخاکپای مبارک اقدس ظاهر است که کلیسیاها موضع عبادت و باغات وقف است وسیله روزی این بیچارگان است و احوال فقیران برعالمیان ظاهر است یکنینار مال و منالی ندادیم و سابقاً بدینگونه ارامنه جولاهه مدار میگذرانیدیم و حال ایشان نیز پریشان شده چیزی عاید فقیران نمیشود معیشت فقیران منحصر بمداخل همین دوسه پاره باغ است استدعاء آنکه بمحض رضای الهی و بخاطر حضرات ائمه هدا و بتصدق فرق مبارک اقدس اعلى خراج اراضی کلیسیاها و باغات وقفی ایشانرا تخفیف تصدق مقرر شود که از حشو جمع اراضی جولاهه وضع نمایند تا فقیران صبح و شام برفاهه حال بدعاگویی دوام دولت ابد مدت اشتغال داریم که هر آنیه عند الله ضایع نخواهد شد. امره العالی.

հարկը։ ԺԶ-ԺԸ դարերում այս եզրոյթը քիչ գործածական էր եւ կիրառուում էր բնակչութիւնից գանձուող մի շարք պետական հարկերի համար, որպէս հաւաքական հարկային եզրոյթ (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 110):

Վաւերագիր 2

Համար 106 (57), բնագիր, գիր՝ շիբասթ

Նաղիր շահի հիշրայի 1149 թ. ուղարկած ամսի (1736 թ. նոյեմբերի 5 — դեկտեմբերի 5) հրամանագիրը՝ հրապարակուած Նոր Ջուղայի հայուկեան խնդրանքով, որով Սպահանի բարձրաստիճան պաշտօնեաներին հրահանգուած է նրանց տները, այգիները, եկեղեցիներն ու խանութները հանել հարկահանուող տարածքների թուից եւ հարկազանձուածներ կատարել այնպէս, ինչպէս գրանցուած է հարկամատեանում

[Կնիք]. Աստուծոյ բարեհաճութեամբ մարմնացում Նաղիրն է 1148

Բարձրեալ Ալլահին եւ ապաւինում: Արքայական հրաման եղաւ, որ թագաւորահաստ Սպահանի նայերը<sup>33</sup>, վեզիրը<sup>34</sup> եւ մուսթովֆին<sup>35</sup> գիտեան, որ ինչպէս որ օրերս յիշեալ թագաւորահաստ [քաղաք]ի Հին ու Նոր Ջուղաների ուայաթները<sup>36</sup> զեկուցե-

33 Նայեր - نایب - տեղակալ, փոխանորդ: Տուեալ դէպքում խօսքը Սպահանի կառավարչի մասին է:

34 Վեզիր - وزير - Աֆշարական թագաւորական տան իշխանութեան շրջանում «վեզիր» հիմնականում անուանում էին մի որեւէ շրջանի կամ քաղաքի ներքին գործերը տնօրինող պաշտօնեաներին կամ ընդհանրապէս պետական պաշտօնեաներին ( رضا شعبانی، تاریخ ایران عصر افشاریه، جلد 2، ص. 645):

35 Մուսթովֆի - مستوفی - Այսպէս էին կոչում պետութեան, արքունիքի, ինչպէս նաեւ կրօնական հաստատութիւնների ֆինանսական, հաշուապահական գործերի գլխաւոր կառավարիչները: Մուսթովֆիներ կային խոշոր մահաւազային վարչական կենտրոններում, քաղաքներում: Նրանք վերահսկում ու կառավարում էին տուեալ մահաւազի կամ երկրամասի հարկային եկամուտները: Ենթարկուում էին մայրաքաղաքում նստող մուսթովֆի ալ-մամալեքին: Նա վերահսկում էր պետական ամբողջ ելումուտը, նախապատրաստում քիւլէն եւ ստուգում տարեկան հաշուեկշիռները ( رضا شعبانی، تاریخ ایران (عصر افشاریه، جلد 2، ص. 649, 633):

36 Ռայաթ, ճիշտը՝ ուիլայաթ - رعیة - Այգրանդ-բիրներում այսպէս եւ կոչում հպատակ եւ հարկատու ժողովրդին, յատկապէս՝ նստակեաց, հողագործ գիւղացիներին (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 118-9):

ցին սրբազնագոյնին, մուսայիզները ջամ՝ կազմելու ժամանակ իրենց բնակելի տների հողերը եւ ներառել եւ [հարկուող] տարածքի մէջ եւ հարկ նշանակել: Մինչդեռ յիշեալ համայնքը վճարում է իր ջիզեան<sup>37</sup>, հողագործութեան մալը եւ դիւանի միւս հարկերը, նրանց բնակելի տների հողերից մալ պահանջելը կարող է նրանց կործանման պատճառը դառնալ: Ուստի կարգադրեցինք նրանց բնակելի տների հողերը հարկուող տարածքների թուից հանուած ու նրանց շնորհուած համարել եւ նրանց եկեղեցիների, խանութների, տների ու այլ հողերը հարկել այնպէս, ինչպէս մզկիթների տարածքներն են դափթարուած<sup>38</sup> արուար-է ջամ՝ արուած: Բարձրագոյն դիւանի գթասիրտ մեծ մուսթովֆիները թող այս հրամանագիր-պարզելը յարատեւող դափթարներում գրանցել եւ մահայի<sup>39</sup> հարկաբաշխման ընթացքում կարգադրութեանը համապատասխան վարուեն: Այս թող իրենց պարտականութիւնը համարեն: Գրուեց 1149 թուականի ուայաթ ամսին:

[مهر]: مظهر لطف الهی نادراست 1149  
اعوذ بالله تعالى شأنه فرمان همایون شد آنکه نایب و وزیر و مستوفی دارالسلطنة اصفهان بدانند که چون درینوقت رعایای جولاهه قدیم و جدید دارالسلطنة مزبوره بعرض

37 Ջիզեան - جزیه - ոչ մուսուլման (քրիստոնեաներ եւ հրէաներ) ուայաթներից՝ զիմնիներից գանձուող գլխահարկ, որը կանխիկ դրամով գանձուում էր իրաքանչիւր աշխատունակ չափահաս տղամարդուց: Ամէն գիւղից գանձուող ջիզեան հաշուած էր եւ ընդհանուր գումարով հարկային մատեաններում գրանցուած էր տուեալ գիւղական համայնքի անունով: Նոր Ջուղայից գանձուող ջիզեան շահ Արքաս Ա-ի օրօք շատ չէր՝ 180 թուման: Յետագայում այն աւելացաւ՝ հասնելով 580 թումանի. այս չափը ֆիքսուեց շահ Սուլէյմանի 1683 թ. հրամանագրով (V. Ghougassian, նշ. աշխ., էջ 79):

38 Դափթար - دفتر - տետր, մատեան: Գլխաւորապէս օգտագործուում էր հարկային մատեանների իմաստով. դափթար կամ դափթարխանէ (دفترخانه) էր կոչում նաեւ այն հիմնարկութիւնը, որտեղ պահում էին հարկային մատեանները (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 108):

39 Մահալ - محل - շրջան, գաւառ, երբեմն նաեւ՝ թաղամաս եւ վարչական միաւոր:

اقدس رسانینند که ممیزان در حین قرار جمع اراضی خانهای سکنای ایشان را داخل مساحت و بدستور اراضی باغات جمع قرار داده اند و با وجود آنکه جماعت مزبوره از عهده جزیه و مال اراضی و غیره حقوق دیوانی خود بیرون می آیند مطالبه مال اراضی خانها موجب استیصال ایشان میشود بنابراین مقرر فرمودیم که اراضی خانهای سکنای ایشانرا از حشو جمع وضع و تخفیف و تصدق مقرر دانسته اراضی کنیسه ها و دکاکین و خانان و غیره را بموجب مساحت مساجد بنحوی که در دفتر ابوابجمع است بازیافت نمایند. مستوفیان عظام کرام دیوان اعلی رقم اینعطیه را در دفاتر خلود ثبت و در حین تصدی محاسبه بنهج مقرر عمل و در عهده شناسند.

تحریرأ فی شهر رجب سنه 1149

Ծանօթագրութիւն: Վերը ներկայացուած երկու հրամանագրերը ցոյց են տալիս, որ հարկերի աւելացման ձեւերից մէկը, որ կիրառուել է Նաղիրի իշխանութեան շրջանում, հարկման ենթակայ տարածքների աւելացումն էր, երբ հարկացուցակում ընդգրկուած էին եկեղեցիների ու նրանց վակֆային կալուածքների, ջուղայեցիների բնակելի տների, տնամերձ հողամասերի ու խանութների տարածքները, որոնք նախկինում ազատուած էին հարկերից:

Այս կապակցութեամբ հարկ է յիշել, որ Նոր Ջուղայի տարածքը Սպահան բռնազաղթուած հայուկեանն էր շնորհուել շահ Արքաս Ա-ի կողմից որպէս պարգեւ, եւ, ըստ Ժէ դարի վաւերագրերի, այնտեղ բնակուող հայերի տները, կալուածքների ու զանազան շինութիւնների տարածքները չէին հարկուում<sup>40</sup>:

Այնուամենայնիւ, Սեֆեան շահ Սուլէյմանի 1671 թ. հրամանագրով Նոր Ջուղայի եկեղեցական կալուածքները սկսուած են հարկուել, եւ ջուղահայերի կողմից վճարուող ընդհանուր գումարը հասնում է 800 թումանի<sup>41</sup>: Դա բաւականին ծանր գումար էր, եւ չնայած ջուղահայերին ժամանակ առ ժամանակ յաջողուած էր ձեռք

40 Յ. Տէր-Յովհաննէանց, նշ. աշխ., հտ. Ա, էջ 35-38:  
41 Յ. Տէր-Յովհաննէանց, նշ. աշխ., հտ. Բ, էջ 243:

բերել ապահարկութեան հրամանագրեր<sup>42</sup>, իրանի գահակալները հարկ եղած դէպքում, յենուելով յիշեալ հրամանագրի վրայ, պահանջում էին այն:

Վաւերագիր 3

Համար 107(62), բնագիր, գիր՝ շիբասթ

Իրանի փոխարքայ Ռեզա Ղուլի Միրզայի<sup>43</sup> հիշրայի 1153 թ. շաբան ամսի 15 (1740թ. նոյեմբերի 5) հրամանագիրը՝ հրապարակուած Նոր Ջուղայի հայ բնակիչների խնդրագրի հիման վրայ, որով արգելուած է այնտեղի հայերին ապօրինաբար գաղթեցնել:

Բարձրագոյն փրաման եղաւ հետեւեալի մասին.

Որովհետեւ խնդրարկուները ստորեւ հանգամանալից շարադրուած խնդրագրով դիմեցին, ուստի յիշեալ մահալի հաքիմներն<sup>44</sup> ու ամիլները<sup>45</sup>, բացի հրամանագրով հաստատուած օրինական վշուհից<sup>46</sup>, թող

42 Այդ մասին մանրամասն տե՛ս Յ. Տէր-Յովհաննէանց, նշ. աշխ., հտ. Բ, էջ 243-251:

43 Նաղիր շահը, նախաձեռնելով իր արշաւանքը Հնդկաստան, 1738 թ. մայիսի 7-ին իր որդի Ռեզա Ղուլի Միրզային նշանակում է իրանի փոխարքայ: Վերջինս կառավարում է իրանը մինչեւ Նաղիրի վերադարձը Հնդկաստանից 1740 թ. (The Cambridge History of Iran, vol. 7, Cambridge, 1991, p. 39, 42): Բնակամաքար, այս շրջանում հրամանագրերը հրապարակում էին նրա անունից (տե՛ս նաեւ Ք. Կոստիկեան, Մատենադարանի պարսկերէն հրովարտակները, Երեւան, 2008, պրակ IV, վաւ. 14, 15, 16):

44 Հաքիմ - حاکم - գաւառապետ, քաղաքացիական դատարար (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 111):

45 Ամիլ - عامل - պաշտօնեաներ, որոնք հաշուառման էին ենթարկում բոլոր հարկատու օրինակները, չափում ցանքատարածութիւններն ու այգիները, ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց եւ ըստ այնմ որոշում, թէ տուեալ օրինակից որքան հարկ պէտք է գանձուի (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 104):

46 Վշուհ - وجوه - վաճի (գումար) բառի յոգնակի ձեւն է: Այսպէս էին անուանում առհասարակ այն բոլոր հարկերը, որոնք գանձուում էին կանխիկ դրամով: Աղբիւրներում հանդիպում են նաեւ վշուհաթ «وجوهات» «թաւաջջոհաթ» «մութա-

բռնություններով ու անօրինակամտություններով, շիրթաղաթով<sup>47</sup> ու դասթանդազով<sup>48</sup> խնդրարկուներին ներդրություն չպատճառեն: Եթե նրանց բնականաբան հին վայրից գաղթեցնելու արեգակնային օրհնեալ հրամանագիր չի հրապարակուել եւ իրենց հին բնակավայրում նրանք ըստ կարգի վճարում են իրենց հողդուղ-է դիւանի<sup>49</sup>, նրանց չպետք է անհանգստացնեն գաղթեցնելու պահանջով, այլ պետք է թող տան, որ նույն մահալում իրենց ուսյաթական գործերով զբաղուեն: Թող խուսափեն դասթանդազից, բռնությունից ու չարաշահումներից եւ այս իրենց պարտականությունը համարեն: Գրուեց 1153 թուականի շաբան ամսի 15-ին:

[Կնիք]. ... Ռեզա Ղուլի:

Ամենամուսատ ծառաներ Ջուղայի հայ բնակիչների խնդրագիրը

Յախտենական թագաւորութիւնը կառավարող երկնային բարեբախտ տիրակալի աստեղային իշխանութեան հիմքը վերագտնողների վեհ կայանին ենք հասցնում, որ նուստներին ապուսպալերը այլ քաղաքներից եկել, Ջուղայում բնակություն են հաստա-

տել. մեծ մասին անցելու անգեղարար անգեղարար Ատրպատականից ու այլ վիլայեթներից<sup>50</sup> են բերել Ջուղայում բնակեցրել, ուր ամէն տարի մեծ գումարներ ենք վճարում դիւանի սարքարին<sup>51</sup> որպէս մալիյեթ ու վշուհաթ: Օրերս Լինջանաթ ու այլ մահալներից որոշ անձինք անարդար կերպով օրական զանազան ոտնձգություններ են գործում Ջուղայի ուսյաթների ու բնակիչների նկատմամբ՝ պահանջելով նրանցից շիզեա ու արտագաղթել: Մինչդեռ ըստ վճարող հրովարտակի, այն անձինք, որոնք 18 տարի որեւէ տեղ բնակուել են, ազատուում են հեռանալու հարկադրանքից: Այս գիւղի բնակիչները 30, 40 եւ 50 տարուց աւելի է, որ այստեղ բնակուում են, եւ նրանց շիզեայի ու այլ վշուհաթի գումարները մտնում են Ջուղայի շամ'ի մէջ եւ նրանց հեռանալու պահանջը դիւանին որեւէ օգուտ չի բերի, որովհետեւ այստեղ լինելով եւս դիւանի մալը վճարում են, առանց մուսթուրեան<sup>52</sup> իրաւունքի: Այդ մարդիկ իրենց օգուտի համար են մեր նկատմամբ շիրթաղ ու դասթանդազ անում, որը ամալացնում է մահալը: Խնդրում ենք գերագոյն, սրբազանագոյն, օրհնեալ ողորմածութեամբ հպատակեցնող, վճարող հրամանագիր շնորհել թշուառներին, որպէսզի ոչ ոք այս կապակցութեամբ Ջուղայի բնակիչներին չանհանգստացնի, այլ թող տան, որ հանգիստ զբաղուեն լաւերժական պետութեան յարա-

50 Վիլայեթ - Երկիր, երկրամաս, մահալ: Աղբիւրներում եւ վաւերագրերում գործածուում է տարբեր իմաստներով: Երբեմն վիլայեթ անուանակ հասկացուում էր մի ամբողջ երկիր, երբեմն՝ ընդարձակ մահալ, իսկ երբեմն՝ մոլմիսկ մեծ գաւառ (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 121):

51 Սարքար - سرکار - գործերի լիազօր-կառավարիչ, տնօրէն: Կիրաւուում է յատկապէս տնտեսական գործերը տնօրհնող հաստատութեան կամ վարչութեան իմաստով (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Բ, էջ 230):

52 Մու'աֆ - معاف - հարկային իմունիտետ, ազատում բոլոր տեսակի պետական հարկերից, երբեմն՝ միայն որոշ հարկերից եւ պարտաւորություններից: Համանիջ՝ «մուսալլամ, թարխան» (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 114):

ուսջեհաթ - متوجهات՝ ձեւերը (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 121):

47 Շիրթաղ կամ յոգն. շիրթաղաթ - شلتاق - պետական պաշտօնեաների կողմից զանազան զրպարտություններով, կեղծ ու հնարավոր պատրուակներով որեւէ բան շորթելը (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 117):

48 Դասթանդազ - دست انداز - Եզրոյթը կազմուած է «դասթ» (ձեռք) գոյականից եւ «անդաթան» (նետել) բայից: Բառացի նշանակում է «ձեռք նետող», «ձեռք ձգող»: Խօսքը վերաբերում է պետական պաշտօնեաների կողմից զանազան պատրուակներով ուսյաթներից գանձուող տուրքերին, երբ նրանք, այսպէս ասած, «ձեռք էին երկարում» ուսյաթների ունեցումը քիչ եւ փորձում էին դրամ կամ այլ արժէքաւոր իրեր շորթել նրանցից (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 107):

49 Հողդուղ-է դիւանի - ديوانی حقوق - ուսյաթների հարկային պարտաւորությունները պետութեան նկատմամբ (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Բ, էջ 221-2):

տեւման համար աղօթքներով, որոնք Ալլահին անուես չի առնի:

فرمان عالی شد آنکه چون عارضین بشروح مبسوطه متن بمقام عرض و استدعاء در آمده اند لهذا حکام و عمال محل مزبور سوای وجوه حسابی حکمی بعلت تعدیات و شلتاقات و بیحسابات و دست اندازی مزاحم و متعرض عارضین نشده هر گاه در خصوص کوچیدن ایشان از محل سکناى قدیم فرمان مبارک مطاع آفتاب شعاع اعلی و حکم بندگان عالی صادر نشده باشد و در محل توطن قدیم خود از عهده حقوق دیوانی خود موافق ضابطه حسابی بر می آیند بادلایات کوچاندن مزاحم ایشان نشده گذارند که در همان محل بامر رعیتی خود مشغول باشند و از دست اندازی و تعدی و زیادتى محترز بوده در عهده شناسند. تحریراً فی ۱۵ شهر شعبان سنة ۱۱۵۳. [مهر]...: رضا قلی

عرضه داشت بندگان کمترین ارامنه سکنة جولاهه بموقف عرض باز یافتگان پایه سریر ملکان ثریامکان نواب کامیاب سپهر رکاب جهانبانی لایزال سلطنت میرسانند که اینفقیران مجموعاً اباعنجد از سایر بلاد آمده در جولاهه سکنا گرفته اند که اکثری را در قدیم حکماء از آذربایجان و غیره ولایات آورده در جولاهه ساکن گردانیده اند که هر ساله مبلغهای کلی مالیات و وجوهات بسرکار دیوان مهمسازی مینماییم درین اوقات بعضی از مردم لنجانان و سایر محال بمحض شلتاق همه روزه انواع دست انداز برعایاء و سکنة جولاهه و تکلیف کوچیدن و مطالبه جزیه مینمایند با آنکه حسب فرمان قدر توأمان کسانى را که هیجده سال در محلی سکنا داشته باشند تکلیف حرکت مرفوع و ممنوع است و سکنة این قریه از سی سال و چهل سال و پنجاه سال تجاوز است که در اینجا ساکن و وجوه جزیه و سایر وجوهات ایشان داخل جمع جولاهه است و تکلیف کوچیدن بایشان نفعی بدیوان نمیرساند بسبب اینکه اینجا هم که هستند مال دیوان را مهمسازی مینمایند معاف نمینمایند اینمردم بجهة نفع خودشان شلتاق و دست انداز برایشان مینمایند باعث خرابی محل اینفقیران میشود استدعاء آنکه بتصدق فرق مبارک اقدس اعلی رقم قضاءشیم مطاع بفقیران شفقت گردد که احدی درین ابواب مزاحم حال سکنة جولاهه نشوند گذارند که مرفه الحال بمبارکی خود و دعاگوئی دوام دولت ابد مدت اشتغال نمایند که عند الله ضایع نخواهد شد.

**Վաւերագիր 4**

Համար 118(63), բնագիր, գիր՝ շիբասթ

Նադիր շահի հիշրայի 1154 թ. ռաբի' I ամսի (1741 թ. մայիսի 17 - յունիսի 16) հրովարտակը՝ հրապարակուած Նոր Ջուղայի բնակիչների խնդրագրի հիման վրայ, որով արգելուում է Նոր Ջուղայում աֆղանների տիրակալութիւնից առաջ հաստատուած հայերին ապօրինաբար տեղափոխել այնտեղից:

Աստծոյ ստուեր, աշխարհի շահ եւ դարաշրջանի միակ, Իրանի գլխաւոր հրամանատար, Հնդկաստանի, Թուրանի եւ Առանի երկրների թագ շնորհողը<sup>53</sup>

Յանուն Ալլահի

[Կնիք]. Աստծոյ բարեհաճութեան մարմնացում Նադիրն է. 1148

Բարձրելային եւ ապաւինում:

Արքայական հրաման եղաւ հետեւելայի մասին. եթէ յիշեալ համայնքը աւելի քան 20 տարի առաջ է Ջուղայում բնակություն հաստատել, ապա ոչ ոք չպետք է այլ մահալ գաղթեցնելու նպատակով նրանց նկատմամբ շիրթաղ ու դասթանդազ անի: Սա նրանց պարտականությունն է: Գրուեց 1154 թուականի ռաբի' առաջին ամսին:

Ամենամուսատ ծառաներ Ջուղայի ուսյաթների խնդրագիրը

Հովանաւորող տիրակալների պալատում կանգնածներին, թող հազարաւոր ծառաներիդ կեանքեր զոհաբերուեն նրա ոտքերում, տեղեկացնում ենք, որ անցելու խնդրերիս ցաքուցրիս, իրաքանջիւրիս մի մահալից բերել Ջուղայում են բնակեցրել, որպէսզի այն զարգանայ: Սրանից առաջ մի խումբ էլ եկել է Լինջանից ու Ֆարիդանից<sup>54</sup> եւ այս-

53 Այդ գրությունն աւելացուել է լետագայում փաստաթղթի լուսանցքում:

54 Լինջանը Սպահանից 4 կամ 5 փարսախ (1 փարսախ=6կմ) հեռաւորութեան վրայ գտնուող հարաւանակ գաւառ էր, որի մէջ մտնող 10 գիւղերից մէկը Փարթուն կամ պարսկական տարբերակով

տեղ հաստատուել: Մի քանի տարի է այս մահալում հարկ են վճարում: Այժմ զարիթ-ները<sup>55</sup> եկել, դասթանդագ են անում՝ ցանկանալով մի մասին վերադարձնել իրենց նախկին բնակավայրերը ու իրենց մահալում որոշ իխրաջաթ<sup>56</sup> նրանցից գանձել: Նրանց, ում ցանկանում են ետ դարձնել, Ջուղան ստեղծողներ[ի սերնդից] են, ուսյաթների գործերին ու հողագործությունը անտեղեակ արհեստարուներ ու վաճառականներ են: Սրանից առաջ ներկայացուող իրողությունների մասին մահկանացուների հովանաւորի սրբազնագոյն, օրհնեալ ունատեղիին զեկուցուել է եւ բարձր օրհնեալ հրամանագիր է հրապարակուել, որպէսզի մէկ անձին երկու վայրում չհարկեն: [Հրամանում] նշուել է, որ հրապարակուած պարտադիր հրովարտակի համապատասխան՝ եթէ որեւէ մէկը դէտ աֆ-դանների ժամանակներից առաջ մի վայրում բնակուել է, ապա նրան չպէտք է անհանգստացնեն [այդ վայրից] հետանալու պահանջով: Նուսասներս խեղճ ուսյաթներ ենք, որ վճարում ենք դիւանի հարկերը, բայց այս կապակցութեամբ խեղճերիցս յաճախ յաւելագանձումներ են կատարում ու դասթանդագ անում: Խնդրում ենք սրբազնագոյն ամենաբարձր ողորմածութեամբ բարձր ու արդար հրամանագիր հրապարակել, որպէսզի մի քանի տարուայ հետացած լինելու [հարկերը] խեղճերիցս չպահանջեն եւ կրկին արքայական բարձր հրամանագրով թագաւորահասո Սպահանի բարձրաստիճան հաքիմին կարգադրուի անբեկանելի հրամանագրին

Ֆարիդանն էր (Յ. Տէր-Յովհաննէանց, նշ. աշխ., հտ. Ա, էջ 32):  
 55 Ջարիթ - ضابطه - գրաւող, բռնագրաւող: Ժէ-ԺԸ դարերում զարիթ էին կոչում նաեւ պետական հարկերի վարձակալները, որոնք, նախապէս որոշ գումար մուծելով պետական գանձարան, տուեալ օրիւկտի հարկերը գանձելու իրաւունք էին ստանում (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Բ, էջ 215):  
 56 Իխրաջաթ - اخراجات - բառացի՝ «ծախսեր»: Այդպէս էին կոչում այն արտակարգ ծախսերը, որ ուսյաթները պարտաւոր էին հատուցել պետութեանը կամ նրա պաշտօնեաներին (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 110):

համապատասխան վարուել, որը կը յուսադրի խեղճերիս եւ ամէն պահ սրբազնագոյն էութեանը օրհնանքներ կը յղուեն: Նուսասներս էլ, հանգիստ ու ապահով, մեր ուսյաթական գործերով ու արհեստներով կը զբաղուենք: Քանի որ անհրաժեշտ էր, համարձակուեցինք դիմել: Նորին [Մեծութեան] բարձրագոյն հրամանով:

شاهنشاه جهان و نادر دوران فرمان فرمای ایران تاج بخش ممالک هند و توران و اران ظل ظلالة  
 بسم الله  
 [مهر]: مظهر لطف الهی نادر است ۱۱۴۸  
 اعوذ بالله تعالی شأنه فرمان همایون شد آنکه هرگاه جماعت مزبور از بیست سال قبل ازین در جلفا سکنی داشته اند احدی بعلت کوجانیدن بمحل دیگر شلتاق و دست انداز بریشان ننموده مزاحمت نشود و در عهده شناسند.  
 تحریراً فی شهر ربیع الاول سنه ۱۱۵۴ .

عرضه داشت کمترین بندگان رعایای جولاهه بموقف عرض ایستادگان درگاه سلاطین قبله گاه که هزار جان امتثال پایگان فدای سم ستورانش باد میرسانند که از قدیم اراده بنای جلفا را گذاشته اند فقیران تمامی تفرقه و هر یک را از محلی آورده در جلفای مزبور سکنا داده که باعث آبادی محل مزبور گردد و قبل از این جمعی از لنجان و فریدن و غیره آمده اند و در جلفای مزبور سکنا نموده اند و چندین سال است که از عهده تحمیلات محلمزبوره برآمده اند درین اوقات ضابطان آمده دست انداز مینمایند و اراده ضابطان آنکه بعضی را برگردانیده در محل اصلی خود برند و برخی اخراجاتی که در محل خود واقع میشود از ایشان بگیرند و جمعی را که اراده گردانیدن دارند زاینده جلفا که وقوف بامر رعیتی و زراعتی ندارند تمامی اسنافکار 57 و سوداگری میباشند و قبل از این مراتب معروضه را بخاکپای مبارک اقدس روحی فداه عرض و حسب الرقم مبارک والا شرف صدور یافته که یکشخصی را که در دو جا تحمیل نمایند و چنین مذکور میشود که حسب فرمان واجب الازعان والا شرف نفاذ یافته که چنانچه احدی پیش از ایام افاغنه در جایی سکنا نموده باشد متعرض احوال او نشوند و کمترینان رعایای عجزه و مساکین و از عهده تحمیلات دیوانی بیرون آمده و درینخصوص اکثر از اوقات دست انداز و تحمیلات بفقیران مینمایند. استدعاء آنکه بتصدق

57 اصنافکار է լինի հետք

فرقی فرقدانسی اقدس اعلى که رقم معلت شیم والا شرف نفاذ پذیرد که تفرقه چند ساله را از فقیران بازیافت ننمایند و بر طبق رقم قدر توام مالک والا مجدد بعهده عالیجاه حاکم دارالسلطنة اصفهان شفقت و عنایت فرمایند که بموجب رقم قضائیم مالک عمل که موجب امیدواری فقیران بوده هرآنچه باعث تحصیل دعای خیر بجهة ذات اقدس و وجود مقدس حاصل خواهد شد و کمترینان مرفه الحال و فارغ البال بامر رعیتی و شغل بیچارگی خود مشغول بوده باشیم. چون لازم بود جرات بعرض شد. مافی امره الاعلی.

Մանօթագրութիւն: Սեֆեան ժամանակաշրջանում շահ Սուլթան Յուսէյնի 1698/1699 եւ 1710 թթ. հրովարտակենտրոն<sup>58</sup> արձանագրուած կարգի համաձայն՝ ուսյաթները, որոնք 12 տարուց աւելի էին բնակուել որեւէ վայրում, չպէտք է հեռացուէին այնտեղից: Ինչպէս յայտնի է դառնում վաւերագիր 3-ի բովանդակութիւնից, Նազիր շահի ժամանակաշրջանում հաստատուած նոր կարգի եւ հրապարակուած «վճռորոշ հրովարտակի համաձայն՝ այն անձիք, որոնք 18 տարի որեւէ տեղ բնակուել են, ազատուած են հեռանալու հարկադրանքից», այսինքն՝ տարիների քանակը պէտք է գերազանցէր 18 տարին, որ այլեւս նրանց ետ դարձնելու իրաւունք չէին: Ներկայացուող հրովարտակում մատնանշուած է նաեւ, որ պաշտօնեաների կամայականութիւնները չպի ու սահման չէին ճանաչում. արտագաղթելու պահանջ էին ներկայացնում անգամ 30, 40 եւ 50 տարի նոր Ջուղայում բնակուող արհեստաւորներին ու առեւտրականներին՝ առանց հաշուի առնելու նրանց սոցիալական զբաղմունքները:

58 Մատենադարան, կաթողիկոսական դիւան, թղթ. 1է, վաւ. 1110, թղթ. 1գ, վաւ. 234 (այս վաւերագիրը հրատարակուած տե՛ս նաեւ Ք. Կոստիկեան, Մատենադարանի պարսկերէն հրովարտակները, պրակ III, Երեւան, 2005, վաւ. 72): Այս հարցի մասին մանրամասն տե՛ս А. Д. Папазян, Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Ереван, 1972, с. 210-4:

Վաւերագիր 4-ից պարզ է դառնում, որ Նազիրի իշխանութեան շրջանում այդ օրէնքը ճկուն էր եւ անհրաժեշտութեան դէպքում փոփոխուած էր պայմաններին ու իրանի տիրակալի կամքին համապատասխան: Տուեալ դէպքում հրահանգուած էր այդ ժամկէտը երկարացնել եւս երկու տարով, այսինքն՝ հեռացման ենթակայ չէին միայն նրանք, ովքեր նոր Ջուղայում բնակուած էին 20 տարուց աւելի: Դա նշանակում էր՝ հեռանալու հարկադրանքից չէին ազատուած աֆղանների կողմից Սպահանի գրաւումից յետոյ (1722 թ.) այնտեղ հաստատուած հայերը:

**Վաւերագիր 5**  
 Համար 117(61), քնազիր, գիր՝ շիբասթ

Նազիր շահի հիշրայի 1154 թ. ուրբի՝ I ամսի (1741 թ. մայիսի 17 — յունիսի 16) հրամանագիրը, որով նոր Ջուղայի հայերի ներկայացրած խնդրագրին համապատասխան, Սպահանի հաքիմին կարգադրուած է զբաղուել այնտեղի դէպքերի ու խնդիրների քննութեամբ եւ դարուղա<sup>59</sup> չնշանակել Ջուղայում:

Յանուն Ալլահի  
 [Կնիք]. Աստծոյ բարեհաճութեան մարմնաւորում Նադիրն է. 1148

Բարձրեալին եւ պալաինում: Արքայական հրաման եղաւ հետեւեալի մասին. թագաւորամիստ Սպահանի բարձրաստիճան հաքիմը թող ներկայացուած իրողութիւնների պատճառով դադարեցնի Ջուղայում դարուղա մշանակելը եւ ինքը քննի տեղի ունեցող խնդիրներն ու դէպքերը: Այս նրա պարտականութիւնն է:

Գրուեց 1154 թուականի ուրբի՝ առաջին ամսին:

59 Դարուղա - داروغه - Այսպէս էր կոչում տուեալ վայրի ոստիկանապետը, ով ակտիւ մասնակցութիւն ունէր քննչութիւնից գանձուող հարկերի իրացման գործին (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Բ, էջ 214):

Ամենամուսաւ ծառաներ Հին ու Նոր Զուղաների հայերի խնդրագիրը

Գերագոյն, արքայական, երկնային թագաւորութեան գահի ոտքերում կանգնածների բարձրութեանն են հասցնում, որ աշխարհի ու մահկանացուների հովանաւորը ռալաթների հանգստութեան մասին հոգ տանելով, կարգադրել էր, որպէսզի Զուղայում դարուղա չնշանակուի: Այժմ յաճախ Սպահանի հաքիմն ու կառավարիչը Զուղայում դարուղա է նշանակում: Դրա հետեւանքով ռալաթները հարստահարում ու վնասներ են կրում: Խնդրում ենք, ի սէր Աստծոյ, որպէս գերագոյն, ազնուագոյն տիրոջ ողորմութիւն, հպատակեցնող օրհնեալ հրամանագիր շնորհել, որպէսզի այսուհետեւ Սպահանի հաքիմն ու կառավարիչը դարուղա չնշանակի: Եթէ որեւէ վեճ տեղի ունենա, ապա հաքիմն ինքը, թող վերահասու լինի ռալաթների ու խեղճների պահանջներին: Եւ թող օրէնքին ու կարգին համապատասխան վարուեն, որը կը յուսադրի եւ ամէն պահ օրհնանքի պատճառ կը լինի, որը Ալլահն ու մրա մարգարէն անտես չեն առնի: Նորին [Մեծութեան] բարձրագոյն հրամանին հպատակ:

بسم الله

[مهر]: مظهر لطف الهی نادراست ۱۱۴۸

اعوذ بالله تعالى شأنه فرمان همایون شد آنکه عالیجاه حاکم دارالسلطنة اصفهان نظر بمراتب معروضه دیگر در جلفا تعیین داروغه را بنحوی که مقرر گشته بود موقوف نموده قضایاء و سوانحی که روی دهد خود میرسیده باشد و در عهده شناسد. تحریر فی شهر ربیع الاول سنه ۱۱۵۴.

عرضه داشت کمترین بندگان ارمانه جولاهه قديم و جديد بموقف عرض ايستادگان پایه سرير خلافت مصير عرش نظير همایون اعلى ميرسانند که قبله عالم و عالميان بنابر رفاه حال رعایا مقرر فرموده که داروغه در جلفا تعیین نشود حال اکثر اوقات حاکم و صاحب اختیار اصفهان داروغه در جلفا تعیین می نماید و باین سبب تحمیل و خرابی به رعایا واقع میشود استدعا آنکه بخاطر خدا و بتصدق فرق مبارک نواب اشرف ارفع اعلى که رقم مبارک مطاع شفقت و مرحمت فرموده که من بعد حاکم و صاحب اختیار اصفهان داروغه تعیین ننموده چنانچه

دعوايی باشد حاکم خود بحقیقت مدعاى رعایا و عجزه و مساکين رسیده موافق حق و حساب عمل نمایند که هر آنیه باعث امیدوارى و دعاى خير و عند الله و عند الرسول الله ضایع نخواهد شد. مافى امره اعلى.

Ծանոթագրութիւն: Ըստ 1720-1722 թթ. գրուած «Դասթուր ալ-մուլուք» աշխատութեան՝ Սեֆեան շրջանում Սպահանի դարուղան կամ ոստիկանապետը յաճախ նշանակուում էր վրաց արքայորդիներին: Նրա պարտականութիւններն էին գիշերօգնել հսկել կարգուկանոնը քաղաքում եւ կանխել այնպիսի արարքներն, ինչպիսիք էին հարբեցողութիւնը, թղթախաղը, կռիւներն ու մինչեւ 5 թուման տուգանքով սահմանափակուող այլ մանր յանցագործութիւնները: Դարուղան իր պարտականութիւններն իրականացնում էր իրեն ենթակայ պահակազօրայինների օգնութեամբ<sup>60</sup>: Նազիր շահի իշխանութեան շրջանում դարուղայի պարտականութիւններից է դառնում կանխել երկրի բնակչութեան՝ ուխտագնացութեան եւ այլ պատրուակներով արտագաղթը: Մասնաւորապէս, շահի հրամանագրով, ճանապարհային պահակային ծառայութիւններին հրահանգուում է թոյլատրել միայն դարուղայի գրաւոր թոյլատրութիւնն ունեցողների ելքը երկրի սահմաններից<sup>61</sup>: Նոր Զուղայում դարուղայի գործունէութեան մասին ժամանակ առ ժամանակ վկայում են ԺԷ-ԺԸ դարերի առանձին աղբիւրներ:

Նոր Զուղայի քալանթարը դարուղայի ստորադրեալն էր<sup>62</sup>: Ուսումնասիրողները միասնական կարծիքի չեն Նոր Զուղայում դարուղայի գործառոյթների մասին: Նոր Զուղայի համայնքի ներսում ծագած վէճերի քննութեամբ ու կարգաւորմամբ սովոր-

60 دستور الملوك ميرزا رفيعا، به كوشش وتصحيح محمد اسماعيل مارچينكوفسكى، ترجمه على كردابادى، تهران، 1385، ص. 250-249  
61 رضا شعبانى، تاريخ ايران عصر افشاريه، جلد 2، ص. 646  
62 V. Ghougassian, 02. աշխ., էջ 84:

րաբար զբաղուում էին քալանթարն ու տասնակաւազները<sup>63</sup>: Առանձին գործերի քննութեան նպատակով հրահրուում էր վաճառականների եւ անգամ ընդհանուր ժողովներ, որին կարող էին մասնակցել Նոր Զուղայի ու մերձակայքի հայկական բնակավայրերի բոլոր ընտանիքների աւագ ներկայացուցիչները<sup>64</sup>: Միայն յատուկ դէպքերում դատական գործերը յանձնուում էին դարուղայի քննութեանը<sup>65</sup>:

Հրովարտակի բովանդակութեամբ փաստօրէն հաստատուում են Նոր Զուղայում դարուղայի նշանակման մասին զուգահեռաբար այլ աղբիւրներում առկայ տեղեկութիւնները: Կարծում ենք՝ խօսքը Սպահանի դարուղայի կողմից Նոր Զուղայի հայ համայնքի ներքին խնդիրներին միջամտելու դէպքերի մասին է: Այդ միջամտութիւնն է, որ արգելուում է Նազիր շահի սոյն հրամանագրով, եւ Նոր Զուղայի համայնքի ներսում ծագած խնդիրների քննութիւնը յանձնուում է Սպահանի հաքիմին:

Վաւերագիր 6

Յամար 109(66), քնագիր, գիր՝ շիքասթ

Նազիր շահի 1154 թ. ռաբի՛ Ա. ամսի (1741 թ. մայիսի 17 – յունիսի 16) հրամանագիրն ուղղուած Սպահանի մալիյեթի վաքիլին, որով արգելուում է առանց իր յատուկ հրամանի նրա միջամտութիւնը խնդրարկուների (Նոր Զուղայի հայերի) վիճաբանութիւններին

Յանուն Ալլահի

[Կնիք]. Աստծոյ բարեհաճութեան մարմնաւորում Նադիրն է. 1148

Բարձրեալ Ալլահին եմ ապաւինում: Արքայական հրաման եղաւ հետեւեալի մասին. թագաւորամիստ Սպահանի մալիյեթի

վաքիլը<sup>66</sup> մինչեւ որ մրա անունով սրբազնագոյն հրաման հրապարակուած չլինի, չպէտք է ինքնագոյն կերպով խնդրարկուների վիճաբանութիւններին միջամտի: Թող կարգադրութեանը չհակասակուի եւ այն իր պարտականութիւնը համարի: Գրուեց 1154 թուականի ռաբի Ա. ամսին:

Ամենամուսաւ ծառաներ՝ Զուղայի ռալաթների խնդրագիրը

Երկնային ուղեծրում [գտնուող] պալատում կանգնածների բարձրութեանն են հասցնում, որ մուսաւներս վաճառականներ ու առեւտրականներ ենք, որ մեր ապրուստը հայթայթելով ու առեւտրով ենք զբաղում: Երբեմն վեճեր ու խօսակցութիւններ ենք ունենում [միմեանց հետ], որի՛ համար շարի՛ն<sup>67</sup> եւ՝ ուրֆի՛ն<sup>68</sup> ենք դիմում: Որոշ վաքիլներ են Սպահանում յայտնուել, որ գալիս,

66 Վաքիլ – وکیل - որեւէ մէկի կողմից լիազօրուած անձ, ներկայացուցիչ կամ գործերի տնօրէն, նաեւ՝ գործակատար (Յ. Փափագեան, 02. աշխ., պրակ Ա, էջ 121): Ինչպէս երևում է վաւերագրի բովանդակութիւնից, Նադիր շահի օրօք այդպիսի պաշտօնեաներ (մալիյեթի վաքիլ) էին հանդէս գալիս, որոնք միջամտում էին դատաւարութեան գործընթացին՝ հարկային մարմինների օգտին գանձումներ կատարելու համար:  
67 Ծար՝ - عثر - մուսուլմանական գլխաւոր, կրօնական, հոգեւոր օրէնդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տուեալ վայրի բարձրաստիճան հոգեւորականները (Յ. Փափագեան, 02. աշխ., պրակ Ա, էջ 117):  
68 Ուրֆ - عرف - սովորութային օրէնքով առաջնորդող քաղաքացիական դատարաններ, որ գլխաւորում էին տեղական նահանգապետերն ու գաւառապետերը՝ խաները, բէկլարբէկերն ու հաքիմները: Ուրֆի դատարանների դերն անլի մեծ էր յատկապէս երկրի ոչ մուսուլմանական բնակչութիւն ունեցող նահանգներում: Ընդհանրապէս ուրֆի դատարանները անլի մեծ իրաւասութիւններ ունէին, եւ շարի հոգեւոր դատարանների վճիռները մեծ մասամբ եմթակայ էին մրա վաւերացմանը: Ուրֆին էր վերապահուած յատկապէս քրեական խոշոր յանցանքների (սպանութիւն, բռնաբարութիւն, մարմնական վնասուածքներ) քննութիւնը (Յ. Փափագեան, 02. աշխ., պրակ Բ, էջ 233):

63 Յ. Խաչիկեան, 02. աշխ., էջ 49-50:  
64 Նոյն տեղում, էջ 51:  
65 V. Ghougassian, 02. աշխ., էջ 89:

հայցողի կամ պատասխանողի լիազորող դատնալով վեճը ձգձգում են, եւ բոլոր գործերը խաթարում են: Այս հանգամանքը մեծ նեղութիւն է պատճառում: Խնդրանքն այն է, որ հպատակեցնող օրհնեալ հրամանագիր շնորհուի, որպէսզի նուաստներին միջել տեղի ունեցող վեճերին հրօփի եւ շարժի հաքիմի դատարանում վաքիլ չմիջամտի, այլ թողնեն, որպէսզի հայցողն ու պատասխանողն իրենց վեճի շուրջ խօսեն ու լուծում տան: Եւ ամէն պահ բարի օրհնանքի կ'արժանանան: Բարձրագոյն հրամանով:

بسم الله

[مهر]: مظهر لطف الهی تداراست ۱۱۴۸

اعوذ بالله تعالى شأنه فرمان همایون شد انکه وکیل مالیات دارالسلطنة اصفهان در مرافعه دعاوی و گفتگوی صاحببریضه مادام که حکم اقدس بعهدة او صادر نشده باشد خودسر دخل نموده از فرموده تخلف نورزد و در عهده شناسد. تحریراً فی شهر ربیع الاول سنه ۱۱۵۴.

عرضه داشت کمترین بندگان رعایای جولاهه

بنروه عرض ایستادگان دربار فلک مدار میرسانند که این کمترینان تجار و سوداگر هستیم بامر کسب کاسبی و داد و ستد خود مشغولیم بعضی وقت دعوی و گفتگو رو میدهد که رجوع بشرع و عرف میشود چند نفر وکیل در اصفهان بهم رسیده که می آیند از طرف مدعی و مدعی علیه وکیل میشوند دعوی را بطول انجامیده اختلال در کارها بهم میرسد اینمعی باعث خرابی فقیران میگردد استدعاء آنکه رقم مبارک مطاع شفقت و مرحمت فرمایند که در مابین کمترینان دعوی که داشته باشیم در دیوان حاکم عرف و حاکم شرع وکیل دخل ننمایند. گذارند که مدعی و مدعی علیه دعوی خود را گفتگو و طی نمایند که هر آنیه باعث دعای خیر خواهد بود. مافی امره الاعلی.

**Վաւերագիր 7**

Համար 112(200), քնագիր, գիր՝ շիբասթ

Նազիր շահի Հիջրայի 1154 թ. ուրի՝ II ամսի (1741 թ. յունիսի 16 – յուլիսի 15) հրամանագիրը՝ հրապարակուած Նոր Զուղայի ուսայթաների խնդրագրի հիման վրայ, որով կարգադրուած է, բացի դիւանի մութաւաղջեհաթ ու հողդուղ-է գիւանի հարկերից, այլ հարկեր դրամով կամ բնամթերքով չգանձել:

**Յանուն Ալլահի**

[Կնիք]. Աստծոյ բարեհաճութեան մարմնաւորում Նադիրն է. 1148

Բարձրեալին եմ ապաւինում: Արքայական հրաման եղաւ հետեւեալի մասին.

Որովհետեւ խնդրարկում ստորեւ շարադրուած խնդրագրով դիմեց, ուստի թագաւորանիստ Սպահանի բարձրաստիճան հաքիմը, ամիլներն ու քալանթարը<sup>69</sup> ամէն առումով նախկին կարգին ու սովորութեանը, նախկինում հրապարակուած հպատակեցնող հրամանագրերի շարադրանքին համապատասխան պէտք է վարուեն եւ այսուհետեւ դրանց հակառակ յաւելագանձումներ ու դասթանդագ նրանց նկատմամբ չգործեն: Թող կարգադրութեանը չհակառակուեն եւ այն իրենց պարտականութիւնը համարեն: Գրուեց 1154 թուականի ուրի Բ. ամսին:

Ամենամուստ ծառաներ Զուղայի ուսայթաների խնդրագիրը

Երկնային գահին մմանուող արքունիքում կանգնածների կայանի բարձրութեանն են հասցնում, որ սրանից առաջ շահական ուղորմածութեամբ ու մեծահոգութեամբ նուաստների խնդրանքով գերագոյն արքայական բարձր, սրբազնագոյն, օրհնեալ հրամանագիր էր հրապարակուել, որպէսզի ամիլները, զաբիթներն ու դիւանի յանձնակատարները, թշուառներիցս, բացի մութաւաղջեհաթից ու հողդուղ-է դիւանից, ոչ մի դիւար կամ ցորենի հատիկ որպէս աւարիզաթ<sup>70</sup> ու էսթետուաթիաթ<sup>71</sup> չվերցնեն: Այ-

69 Բալանթար – کلتر - Այսպէս էին կոչում քաղաքագլուխները, ովքեր զբաղւում էին բնակչութեան քաղաքացիական հարցերով եւ հետեւում էին քաղաքի հասարակական գործերին: Սրանք սովորաբար ընտրւում էին քաղաքի մեծահարուստ վաճառականներից կամ խօջաններից (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 122):

70 Աւարիզաթ - عوارضات - ուսայթաների պարտադիր աշխատանքը զանազան արտակարգ պատահարների դեպքում: Այս պարտաւորութիւնը եւ շատ յաճախ փոխարինւում էր դրամական տուրքով (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Ա, էջ 105):

նուամենայնիւ, անցեալ տարի մօտ մէկ հազար խարուար<sup>72</sup> հացահատիկ էր նշանակուել նուաստներին որպէս սոյուրսաթ<sup>73</sup>, մէկ հազար էլ շնչին՝ որպէս ջահաթ<sup>74</sup>: Այս մասին օրհնեալ ուսմաստեղիին զեկուցելու համարձակութիւն չունեցանք եւ դա նուաստներին վհատութեան ու վիճակի խաթարման պատճառ դարձաւ: Խնդրում ենք գերագոյն, սրբազնագոյն օրհնեալ ողորմածութեամբ խղճալ նուաստներին, որպէսզի սրտապնդուենք եւ հանգիստ ու ապահով զբաղուենք աղօթքներով, որն Ալլահն ու մարգարէն ամտես չեն առնի: Զերդ Մ'եծութեան հրամանին հպատակ:

بسم الله

[مهر]: مظهر لطف الهی تداراست ۱۱۴۸

اعوذ بالله تعالى شأنه فرمان همایون شد انکه عالیجاه حاکم و عمال و کلانتر دارالسلطنة اصفهان چون صاحببریضه بشرح متن عرض نموده اند لهذا در هر باب موافق دستور و معمول سابق و بشرح ارقام مطاعه که قبل ازین صادر گشته از آنقرار عمل و من بعد بخلاف آن زیادتی و دست اندازی بر آنها ننمایند و از فرموده تخلف نورزند و در عهده شناسند. تحریراً فی شهر ربیع الثاني سنه ۱۱۵۴.

عرضه داشت کمترین بندگان و غلامان رعایای جولاهه بموقف عرض ایستادگان بارگاه عرش اشتباه میرسانند که سابق برین بنا بر مرحمت و مروت شاهنشاهی رقم مبارک اقدس ارفع همایون اعلی برطبق عرض کمترینان شرف صدور یافته بود که عمال و ضابطان و کارکنان دیوان سواى متوجهات و حقوق دیوانی دینار و حبه بعلت عوارضات و استصوابیات از فقیران بازیافت نه نمایند با وجود آن در سال گذشته موازی یکهزار خروار غله مقرره سیورسات کمترینان و یکهزار خروار باج جهات بجان ثبت داشته قهارت و جرات این معنی نکرده که بخاکپای مبارک عرض نماییم و این معنی باعث دلشکستگی کمترینان و برهم خوردگی اوضاع شده است. دعاء آنکه بتصدق فرق مبارک اقدس ارفع اعلی ترحیمی بحوال کمترینان بفرمایند که باعث دلخوشی این بیچارگان بوده مرفه الحال و فارغ البال بدعاگویی اشتغال نماییم که عند الله و عند الرسول ضایع نخواهد شد. انکرکم مطاع.

Ծանօթագրութիւն: *խնդրագրի բովանդակութիւնից պարզ է դառնում, որ Նոր Զուղայի հայութիւնից այդ շրջանում մի շարք նոր հարկեր էին գանձուած, որպիսիք էին աւարիզաթը, սոյուրսաթը, էսթետուաթիաթը եւ ջահաթը, որոնք նախկինում չեն նշուած նրանցից պահանջուող հարկերի թուում: Խնդրագրին կից շարադրուած հրամանագիրը, սակայն, արգելում է ոչ թէ նշուած հարկերի գանձումը, այլ պաշտօնեաների յաւելագանձումներն ու դրամաշորթութիւնը: Այսինքն, տուեալ դէպքում խնդիրը լուծում էի ստացել. նշուած հարկերը «նախկինում հրապարակուած հպատակեցնող հրամանագրերի շարադրանքին համապատասխան» լինելու դէպքում կարող էին գանձուել:*

**Վաւերագիր 8**

Համար 197, քնագիր, գիր՝ շիբասթ

Նազիր շահի Հիջրայի 1155 թ. ուսայթան ամսի (1742 թ. հոկտեմբերի 30 — նոյեմբերի 29) հրամանագիրը՝ հրապարակուած Նոր Զուղայի Յակոբ քալանթարի խնդրագրի հիման վրայ, որով Սպահանի իշխանութիւններին հրահանգուած է խնդրարկուին տրուած նախկին հրամանագրերը վերահաստատուած հա-

71 էսթետուաթիաթ - استصوابیات - դրամական յատկացում պետական պաշտօնեաներին. չափը որոշում էր քալանթարը իրաքանչիւր տարուայ սկզբին մարտի 1-ին, եւ արդէն ուստի յոստիսարի Սալիմ Բեկի մոտ: Մարտի 1-ին յոստիսարի Սալիմ Բեկի մոտ յարկերը վերցնելու համար յարկաւորներին յարկերի մասին տեղեկանքներ տրուելու համար յարկաւորները, որը հաստատուած էր յատուկ մատենաներով:

72 Խարուար - خروار - կշռի միաւոր, որը հաստատ էր 100 մանի: Եթէ նկատի ունենանք, որ Թաւրիզի իրաքանչիւր ման կշռում էր 3000 գրամ, ապա մէկ խարուարը կարող էր կշռել 300 կգ (Յ. Փափագեան, նշ. աշխ., պրակ Բ, էջ 220):

73 Սոյուրսաթ կամ սուրսաթ - سیورسات - ուսայթաների կողմից տուեալ վայրում գտնուող գօրքի արտադրութեանը մթերքով, նաեւ՝ ընդհանրապէս քաղաքի մթերքով, նաեւ՝ ընդհանրապէս քաղաքի մթերքի մասին գլխաւոր ուժերին պարէնի ու մթերքի մատակարարումը, որը հաստատուած էր յատուկ մատենաներով:

74 Ջահաթ - جهات - վարելահողերից գանձուող հողային հարկը, որը քանախ հանդէս էր գալիս մալիկի հետ միասին՝ մալուջահաթ ձեռով (A. Д. Паназян, նշ. աշխ., էջ 229-233):

մարել եւ նրա հանդէպ անօրինականութիւններ ու ոտնձգութիւններ թոյլ չտալ

Յանուն Ալլահի

[Կնիք]. Աստուծոյ բարեհաճութեան մարմնացում Նադիրն է 1148

Բարձրեալ Ալլահին եմ ապաւինում: Արքայական հրաման եղաւ, որպէսզի Սպահանի հաքիմներն ու ամիրները խնդրարկուի կապակցութեամբ հրապարակուած հրամանագրերի բովանդակութիւնը վերահաստատուած եւ ազդեցիկ համարելով՝ հրամանին ու կարգին հակառակ շիլթաղ, յաւելագանձում ու դաւաճանքով չկատարեն, եւ այս թող իրենց պարտականութիւնը համարեն: Գրուեց 1155 թուականի ուսմազան ամսին:

Ամենանուաստ ծառայ Ջուղայի Յակոբ քալանթարի խնդրագիրը

Գերագոյն արքայական, սրբազնագոյն իշխանութեան գահի ոտքերում կանգնածների բարձրութեանն է հասցնում, որ քանի որ նուաստս պալատի նուիրեալ ծառան է եւ մշտապէս հաւատարիմ կերպով ծառայել է նրան, ուստի նախկինում ամիրները, հաքիմներն ու ամիրները մշտապէս հոգ են տարել եւ պատուով վերաբերուել նուաստիս, եւ մասնաւոր ծառայութիւնների համար ու այլ պատճառներով ներութիւն չեն պատճառել: Օրերս չնայած անձնագրութիւններին, գերագոյն, արքայական, սրբազնագոյն հրամանագրերը, որոնց հրապարակմամբ պատուել են նուաստիս, հաշուի չեն առնում եւ մասնաւոր ծառայութիւններ[ի պահանջով] սաստիկ ներութիւն են պատճառում: Այս հանգամանքը խիստ վիրաւորում է նուաստիս եւ յուսահատեցնում վաճառականներին, որոնք հետաւոր երկրներում են շրջում: Քանզի ամէն տարի նրանց գնալ-գալուց ու [առեւտրական] շփումներից վատահաբար մեծ գումարներ են հասնում դիւանի սարքարին, նրանց յուսալքումից դիւանի հարստութեանը վնաս կը հասնի: Խնդրաւքն այն է, որ գերագոյն, արքայական, սրբազնագոյն, օրհնեալ ողոր-

մածութեամբ վճռորոշ հրամանագիր հրապարակուի, որպէսզի հաքիմներն ու ամիրները անկեղծ ծառայի կապակցութեամբ շնորհուած արդար հրամանագրերի բովանդակութիւնը վերահաստատուած համարեն եւ մասնաւոր ծառայութիւնների պահանջով ու հրամաններով նուաստներին չամբաստանեն, այլ թողնեն, որ հանգիստ մեր պարտականութիւնները կատարենք, եւ գրադուենք յարատեւող պետութեան համար աղօթելով: Գերագոյն հրամանով:

بسم الله

[مهرا]: مظهر لطف الهی نادر است ۱۱۴۸

اعوذ بالله تعالی شأنه فرمان همایون شد انکه حکام و عمال اصفهان ارقامی که در باره عارض صادر شده باشد مضامین آنها را ممضی و متنفذ دانسته بخلاف حکم و حساب شلتاق و زیادتى و دست انداز ننمایند و در عهده شناسند.

تحریراً فی شهر رمضان سنه ۱۱۵۵.

عرضه داشت كمتري بنديگان يعقوب كلانتر جولاها بموقف عرض ايستادگان پايه سرير خلافت مصير اقدس ارفع همایون اعلى ميرساند که چون اين كمتري از جمله بنديگان حقيقي اين درگاه و هميشه باخلاص و عقيدت صادق بخندمت و بندگی اين درگاه قيام مிடاريم بنا عليه در ايام سابق هميشه امرا و حکام و عمال مراعات بفقير می نمودند و بآبرو سلوک مسلوک مிடاشتند و در باب خدمات جزوی و ساير جهات مزاحم حال كمتري ن ميشدند در اين ايام با وجود جانفشانيها و ارقام مبارک اقدس اعلى که بسرافرازی اين فدويان شرف نفاذ پذيرفته است مراعات نمينمايند و در باب خدمات و فرمايش جزوی انواع تصدع میدهند اينمعنی باعث خفت كمتري و ناامیدی جمعی تجار كمترينان که در بلاد بعیده اند ميگرديد چون هر ساله مبلغهای کلی باعتبار آمد و شد ایشان انتفاع از محشور و خروج و غيره بسرکار ديوان ميرسد و ماپوسی ایشان باعث نقصان مال ديوان ميشود. استدعاء آنکه بتصدق فرق مبارک اقدس اعلى رقم قضاء شيم مبارک اعلى شرف نفاذ پذيرد که حکام و عمال مضامين ارقام ميمنت فرجام مبارک را در باب اين بنده باخلاص ممضی دانسته بعلت خدمات و فرمايشات جزوی مزاحم حال بنديگان نشوند. گذارند که بفراغبال بلوازم تقديم خدمت و دعای دوام دولت بيزوال اشتغال نمايند. ماثی امره الاعلى.

Ծանօթագրութիւն: Ինչպէս Նոր Զուղայի հայ մեծահարուստ վաճառականները, տեղի հայ համայնքի ղեկավարը եւս յաճախ դառնում էր տարբեր միջոցներով կատարուող դրամաշորթութեան գոհը: Այս մասին որոշ տեղեկութիւններ կան ժամանակաշրջանի նաեւ այլ աղբիւրներում: Մասնաւորապէս իր մի նամակում Խօջա էմինազը նշում է, որ ինքը եւ Նոր Զուղայի քալանթարը 1745 թ. յունուարի 9-ին կանչուել են շահի բանակատեղին, որտեղ վերջինիս վրայ 2770 թումանի տուգանք է նշանակուել: Նոր Զուղայի քալանթարը, ում անունը չի նշուում, մեծ դժուարութեամբ եւ տեղի հայութեան աջակցութեամբ կարողացել է հայթայթել այդ գումարն ու վճարել շահին, ինչից յետոյ պաշտօնազուրկ է արուել<sup>75</sup>:

Ներկայացուած հրովարտակի բովանդակութիւնը պարզորոշ վկայում է Նոր Զուղայի հայ քալանթարի իրաւունքների ոտնահարման ու լրացուցիչ պարտականութիւններով նրան ծանրաբեռնելու, դանազան միջոցներով կատարուող դրամաշորթութեան մասին:

Վաւերագիր 9

Համար 121(175)?, քնագիր, գիր՝ շիքասթե

Նադիր շահի հիշրայի 1156 թ. ուսմազան ամսի (1743 թ. հոկտեմբերի 19 — նոյեմբերի 18) հրամանագիրը՝ հրապարակուած Նոր Զուղայի վաճառականների կողմից ներկայացուած խնդրագրին համապատասխան, որով կարգադրուում է նրանց չանհանգստացնել չունեցած ապրանքների ու բնամթերային հարկի պահանջով

Յանուն Բարձրեալ Ալլահի [Կնիք]. Պետութեան ու հաւատի գոհարը կորել էր, երբ նրա փոխարէն Աստուած Իրանը հաստատեց Նադիրի [կամ ընտրեալի իշխանութեան տակ]

Բարձրեալին եմ ապաւինում:

Արքայական հրաման եղաւ հետեւեալի մասին. Սպահանի հաքիմներն ու ամիրները չենալ<sup>76</sup> եւ ապրանքը, որ խնդրարկուներն ունեն, պէտք է ըստ կարգի, նրանց համաձայնութեամբ ու արժէքը կանխիկ վճարելով, գնեն եւ ջեմսի պատճառով, որ նրանք չունեն, չանհանգստացնեն եւ ներութիւն չպատճառեն: Եւ թող հրամանին չհակառակուեն եւ այն իրենց պարտականութիւնը համարեն:

Գրուեց 1156 թուականի օրհնեալ ուսմազան ամսին:

Ամենանուաստ ծառաներ Նոր Զուղայի հայ վաճառականների խնդրագիրը

Գերագոյն,՝՝Արքայական, սրբազնագոյն, երկնային գահի ուղեծրին հասնող իշխանութեան գահի ոտքերում կանգնածների բարձրութեանն են հասցնում, որ բարձրագոյն դիւանի կողմից պահանջուող բոլոր այն ապրանքները, որ նուաստներս ունենք թագաւորանիստ Սպահանում, Ռեշտում ու Ջուղայի նաւահանգիստներում, խոնարհաբար տալիս ենք, եւ այլոք այդ հարցում մեզ հետ մասնակից չեն: Չնայած այդ հանգամանքին, այն ջեմսի վճարմանը, որ մենք չունենք, բայց այլոք ունեն, մեզ եւս մասնակից են դարձնում: Թշուառներս այդ ջեմսը չունենալով, ստիպուած ենք լինում խեղճանալ եւ խնդրանքով ու բարձր գնով այն գնել, որ գերագոյն դիւանի սարքարին տանք: Նրանք օգտուում են, եւ մենք վնաս ենք կրում: Այս հանգամանքը խիստ վատացնում ու խաթարում է մեր վիճակը՝ վնաս հասցնելով նաեւ դիւանի հարստութեանը: Խնդրում ենք արքայական գերագոյն, սրբազնագոյն, օրհնեալ ողորմածութեամբ վճռորոշ հրամանագիր շնորհել, որ այսուհետեւ դիւանի համար այն ապրանքները, որ նուաստներս չունենք, չպահանջեն [աւելով, թէ] գնացէք այլոցից գնէք, բերէք դիւանի սարքարին տուէք, այլ թողնեն, որ հանգիստ մեր գործերով գրադուենք եւ հողղող-է դիւանին վճարելով՝ ա-

75 S. Aslanian, 62. աշխ., էջ 205:

76 Ջեմս -- جنس բնամթերային հարկ:

ղօթենք յարատեղ պետութեան համար, որն Աստուած անտես չի առնի: Բարձրագոյն հրամանին հպատակ:

[مهر]: بسم الله. نگین دولت و دین رفته بود چون از جا بنام نادر ایران قرار داد خدا

اعوذ بالله تعالى شانه فرمان همایون شد آنکه حکام و عمال اصفهان جنس و متاعی را که صاحب‌عرضه داشته باشند بر وفق حساب برضای ایشان و قیمت را نقد داده ابتیاع نمایند و بعلت جنسی که نداشته باشند مزاحم و متعرض احوال ایشان نشده زیادتی نمایند و از فرموده تخلف نورزند و در عهده شناسند.

تحریراً فی شهر رمضان المبارک سنه ۱۱۵۶.


عرضه داشت بندگان کمترین تجار ارامنه جولاهه

بموقف عرض ایستادگان پایه سریر خلافت مصیر عرش نظیر اقدس [ارفع همایون اعلی] میرسانند که آنچه اجناس فرمایشی دیوان اعلی بدارالسلطنة اصفهان و رشت و بندر جولاهه میشود هر متاعی را که فقیران داریم بسر و جان منتسب دانسته بندگان مینماییم میدهیم و دیگران در انبواب شرکت باینفقیران مینمایند با وجود اینمراتب هر جنسی را هم که فقیران نداریم دیگران دارند از انهم رسد بفقیران میرسانند اینفقیران ان جنس را نداریم بدهیم لاعلاج باید از آنها که دارند بعجز و التماس بقیمت اعلی بخریم بسرکار دیوان اعلی بدهیم ایشان انتفاع را میبرند فقیران نقصان را میکشیم اینمعنی باعث خرابی و برطرف شدن اینفقیران و نقصان مال دیوان میشود استعدا آنکه بتصدق فرق فرقانهای مبارک اقدس اعلی رقم قضاءشیم مبارک شفقت و مرحمت شود که من بعد بجهة فرمایش دیوان متاعی را که فقیران نداشته باشیم مطالبه آنرا از فقیران تکلیف نمایند که بروید از دیگران بخرید بیارید بسرکار دیوان بدهید. گذارند که فقیران مرفه الحال بشغل بیچارگی خود قیام و از عهده حقوق دیوانی خود برآمده بدعای دوام دولت بیزوال اشتغال نمایند که عند الله ضایع نخواهد شد. مافی امره الاعلی.

Մանօթագրութիւն: Մինչև նազիր շահի ժամանակաշրջանը եւ նրանից յետոյ եւս աղբիւրներում ջուղահայերից նման հարկի դանձման մասին որեւէ յիշատակութիւն չկայ: Ինչպէս հաւաստում է հրովարտակի բովանդակութիւնը, բնամթերալին հարկի՝ ջեմսի պահանջը որեւէ մթերք չարտադրող վաճառականներից ու արհես-


տաւորներից, մեծ նեղութիւն էր պատճառում նրանց եւ հարկադրում հարկ վճարելու նպատակով բարձր գնով գնել այդ բնամթերքը:

Այս հարկի ծանրութիւնը պատկերացնելու համար բաւական է յիշել Տէր Յովհաննանի պատմութեան հետեւեալ հատուածը. «Տուեալ էր նազէր զհրովարտակի մի եւս նեղեացն զհայս եւ մի պահանջեացն ՚ի նոցանէ առաւել ինչ քան զհարկն սահմանադրեալ, որ էր առ ամն յաւել քան 500 թուման. Այլ ՚ի նմին ամի յորում զհրովարտակն ստացեալ էին՝ հատուցին 1500 խալուար ցորեանս, որ յաղազս սղութեան տարւոյն իւրաքանչիւր խալուար արժէր 6 թուման, որով գումարն բովանդակի ինն հազար թուման»<sup>77</sup>:




Վաւերագիր թիւ 1

77 Յ. Տէր-Յովհաննանց, Աշ. աշխ., հտ. Ա, էջ 268:




Վաւերագիր թիւ 2




Վաւերագիր թիւ 3



Վաւերագիր թիւ 4




Վաւերագիր թիւ 5



Վստերագիր թիւ 6



Վստերագիր թիւ 8



Վստերագիր թիւ 7



Վստերագիր թիւ 9

Kristine Kostikyan. *New Julfa during Nadir Shah's rule in Iran*

SUMMARY

The decline of the New Julfan Armenian community which started at the end of the 17th century continued through the whole period of the 18th century and was especially intensive during Nadir Shah's reign. The latter's rule based mainly on military campaigns, was aimed to supply the heavy expences of the Persian army in its unceasing wars. New Julfa as the other parts of Iran suffered much hardships in the consequence of the economic decline, the insecurity and tyranny characterizing the whole period of Nadir's rule. The Armenian community of New Julfa and especially the wealthy merchants became the targets of various encroachments made with the aim of extortion and getting as much money as possible. The article represents 9 royal decrees of the period, kept in the museum of St. All Saviours Monastery,

with their Persian texts, photos, Armenian translations and necessary commentaries. The documents contain detailed information about the taxes levied on the community, their increase, the additional tributes and fines obtained in different ways and under various pretexts. The documents and other sources of the period show that the increase in taxes was achieved through assignment of new taxes, levied both in cash and in food, the assignment of officials, who intervened in the inner affairs of the community and in the court examination of cases referring to the Armenians. The contents of some documents witness that in the period of Nadir shah's rule no Armenian, not even the kalantar, the head of the community, was safe from encroachments upon their rights and property.